ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող,
պատմական գիտությունների դոկտոր
rubensahakyan58@gmail.com

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԷՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ.)

Բանալի բառեր՝ Էրզրում, ցեղասպանություն, Կովկասի հայոց բարեգործական ընկերություն, Սամսոն Հարությունյան, Հակոբ Զավրիյան, Ստեփան Զորյան (Ռոստոմ), Արշակ Սաֆրաստյան:

1916 թ. փետրվարի 3-ին ռուսական զորքը գրավում է հայոց հնագույն քաղաք Էրզրումը (Կարին): Տեղի 15 հազար ըստ այլ տվյալի՝ 25 հազար հայերից, ցեղասպանությունից հետո[1] ողջ մնացածների վերաբերյալ թվային տվյալները հակասական են՝ 80[2] կամ 200[3]: Զգալի թվով կանայք և երեխաներ բռնի առևանգվել էին մահմեդականների կողմից:

Էրզրումի զինվորական պարետ է նշանակվում գնդապետ Մովսես Սիլիկյանը (Մոիսեյ Սիլիկով): Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պյոտր Կալիտինն արգելում է հայերի մուտքը Էրզրում[4]: Դա է պատճառը, որ Կովկասի հայոց բարեգործական ընկերության (ԿՀԲԸ) նախագահ Սամսոն Հարությունյանը դիմում է Կովկասի փոխարքայի զինվորական օգնակա-

---

[1] «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, 28 փետրուարի, N 14, էջ 4:

[2] *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.),* Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ.՝ **Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան,** պատ. խմբ.՝ Ա. Վիրաբյան, Ե., 2004, էջ 89:

[3] **Бурышкин П.,** *В Эрзеруме,* «Армянский вестник», Москва, 1916, N 7, с. 4.

[4] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 9, թ. 12:

նին՝ խնդրելով թույլատրել իր ընկերությանը կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեին (ՀԿԿ)[5], լիազորներ ուղարկել քաղաքացիական բնակչությանն օգնելու և տարհանելու անվտանգ վայրեր: Ռուսական իշխանություններին է ներկայացնում 21 լիազորի ցուցակ, որոնց թվում էին Արշակ Սաֆրաստյանը, Հրաչյա Զաքարյանցը, Կարո և Արմեն Սասունիները և խնդրում է նրանց հատկացնել համապատասխան անցագրեր[6]:

Ու թեև 1916 թ. փետրվարի 11-ին Երևանի թեմի հոգևոր առաջնորդ և Երևանի «Եղբայրական օգնության» հանձնաժողովի նախագահ Խորեն եպիսկոպոս Վարդազարյանին հասցեագրված Երևանի պարետի գրությունում տեղեկացվում էր, որ բանակային հրամանատարությունը հայերին թույլ է տվել վերադառնալ Կարին[7] և, նույնիսկ, տրվել է 21 անցագիր՝ Կարին ուղևորվելու համար, սակայն փետրվարի 26-ին հետևում է Կովկասյան բանակի թիկունքի պետ, գեներալ Ս. Վ. Տոմիլինի հեռագիրը Խ. եպիսկոպոս Մուրադբեկյանին այն մասին, որ հրամանատարությունը նպատակահարմար չի գտնում մասնավոր անձանց մուտքը Կարին[8]:

Այս ամենից հետևում էր, որ ռուսական իշխանություններն ունեին հեռու գնացող նպատակներ, ոչ միայն սկսել նվաճված տարածքների ռուսացման քաղաքականություն, այլև փորձել «բարեկամական» հարաբերություններ հաստատել տեղում մնացած թուրք

---

[5] Փախստականներին և հայ կամավորներին օգնություն կազմակերպելու համար ԿՀԲԸ-ը 1914 թ. սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում կայացած համագումարում ընտրում է Հայկական կենտրոնական կոմիտե՝ բաղկացած 24 անդամից: Կոմիտեի պատվավոր նախագահն էր Վրաստանի և Իմերեթի հոգևոր առաջնորդ Մ. եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, նախագահն էր Ս. Հարությունյանը:

[6] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 126, թ. 26 և շրջ.: «Армянский вестник», Москва, 1916, N 5, с. 14.

[7] Նույն տեղում, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 11:

[8] Նույն տեղում, թ. 26:

բնակչության հետ[9]: Կովկասյան բանակի հայ զինվորական հովիվ Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցը 1916 թ. նոյեմբերի 1-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված զեկուցագրում հայտնում էր, որ ի թիվս մի շարք այլ հայ առաքելական եկեղեցիների. «Կարինի մօտ գտնուող Իլիճայ աւանի հայոց եկեղեցին զինուորական իշխանութեան հրամանով ձևափոխուել է ուղղափառ եկեղեցու»[10]:

Ի վերջո, կովկասյան զինվորական իշխանությունները թույլատրում են Էրզրումում գործել Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքին, ՀԿԿ-ին, Կարինի հայ փախստականների և Մոսկվայի հայկական կոմիտեներին:

1916 թ. մարտի 28-ին քաղաք է գալիս ՀԿԿ-ի լիազոր Գրիգոր Զամոյանը, որպեսզի ուսումնասիրի ոչ միայն Էրզրումում, այլև շրջակա հայկական գյուղերում ստեղծված իրավիճակը, ճշտի բնակչության թվաքանակը և նախապատրաստի համապատասխան օգնության կազմակերպումը[11]: Օսմանյան զորքերի փախուստից հետո Էրզրումում շարունակում է բնակվել 28131 թուրք, որից 13291 տղամարդ[12]: Քաղաքի 20 հազար հայերից ողջ են մնացել միայն 6 ընտանիք և մեկ դերձակ[13]: Էրզրում են հասել տարբեր վայրերից շուրջ 250 փախստականներ[14]:

Փետրվարի 23-ի նիստում ՀԿԿ-ի անդամ և Ազգային բյուրոյի ներկայացուցիչ Հովսեփ Խունունցը ներկայացնում է առաջարկությունները: Նա պարտադիր է համարում ողջ մնացած կանանց ու երեխաների տարհանումը, քանի որ նրանց կեցությունը հոգող ա-

---

[9] Առաջարկվում էր օգնել միայն օսմանահպատակ մահմեդականներին, բացառելով քրդերին, տե՛ս ՀԱԱ, 1168, ց. 1, գ. 324, թ. 16:

[10] **Սահակյան Ռ.Օ.,** *Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցի նամակները Արևմտյան Հայաստանում ռուսական իշխանությունների քաղաքականության մասին,* ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2009, N 3, էջ 300:

[11] «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, 22 մայիսի, N 21, էջ 655:

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում:

մերիկացի միսիոներների դրամական միջոցները սպառվում են: ՀԿԿ-ն, ելնելով վերը նշվածից, որոշում է.

1. Որբերին տեղափոխել Կովկաս,

2. Կանանց ու երեխաներին տեղափոխել Կարս,

3. Ուղարկել լրացուցիչ թվով մարդիկ տեղում օգնությունը կազմակերպելու համար,

4. Ուղարկել բժշկական խումբ[15]:

Օգոստոսի 17-ին ՀԿԿ-ն պաշտոնապես դիմում է Ռոստոմին (Ստեփան Զորյան), առաջարկելով նրան գլխավորել Էրզրումում և շրջանում, ինչպես նաև նոր նվաճված վայրերում հայ բնակչությանը ցույց տրվող օգնությունը: Նշենք, որ որոշ ժամանակ անց Էրզրում է գալիս Քաղաքների միության լիազոր Հակոբ Զավրիյանը (Զավրիև)[16]: Նա զգալի հեղինակություն ուներ ռուսական, հատկապես, կովկասյան կառավարական շրջանակներում: Դեռևս 1914 թ. դեկտեմբերի վերջին Հ. Զավրիևի դիմումը Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին փրկեց Խոյի հայությանը տարագրությունից[17]:

ՀԿԿ-ն Ռոստոմին տալիս է լայն լիազորություններ, որոնցից էին՝ կոմիտե հիմնել Էրզրումում, իր հայեցողությամբ հրավիրել այնտեղ աշխատելու անհրաժեշտ մարդկանց, տալ նրանց հրահանգներ, հիմնել որբանոցներ և մթերքի պահեստներ[18]: Անհրաժեշտ էր բնակչությանը շտապ ապահովել պարենով: Ի թիվս այլ հարցերի, այս հիմնախնդրին էր նվիրված 1916 թ. սեպտեմբերի 16-ին փոխարքայի ռազմական գծով օգնական և Կովկասյան բանակի մատակարարման գլխավոր պետ, գեներալ Ն. Մ Յանուշկևիչի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունը: Պատերազմի իրավունքով

---

[15] *Համահայկական խորհրդակցություններ,* էջ 86–91:
[16] ՀԱԱ, 1168, ց. 1, գ. 324, թ. 110:
[17] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 45, 47:
[18] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 149, թ. 12:

Թուրքիայից գրավված մարզերի գեներալ-նահանգապետ, Ն. Ն. Պեշկովի համոզմամբ՝ գրավված տարածքներից առավել ծանր վիճակում է գտնվում Էրզրումի շրջանը, որին անհրաժեշտ է 300 հազար փութ պարեն, 15 հազար փութ նավթ և 20 հազար փութ շաքար[19]: Քաղաքների միության ներկայացուցիչ Ալ. Խատիսյանը հնարավոր էր, համարում Էրզրումում և այլ շրջաններում պարենային և բժշկական օգնության կազմակերպումը, եթե համաձայնացվեին Զեմսկյան միության[20] հետ համատեղ գործողությունները: Վերջինիս նախագահ Գ. Բորովիտինովը համաձայնվում է Ալ. Խատիսյանի առաջարկության հետ[21]:

Բացի պարենի պակասից առաջացել էր մեկ այլ լուրջ հիմնախնդիր՝ ծանր էր Էրզրումի և շրջանի սանիտարական վիճակը: Բացի հիվանդներից զգալի թիվ էին կազմում վիրավորները, որոնց թիվն օրեցօր աճում էր: Առաջնահերթ էր համարվում բնակչության համար վարակիչ հիվանդությունների հատուկ հիվանդանոցներ[22] կազմակերպելը: Համառուսաստանյան քաղաքների միության (Քաղաքների միություն) գլխավոր կոմիտեի անդամ Պ. Ա. Բուրիշկինը, լինելով Էրզրումում, ևս ընդգծել էր վարակիչ հիվանդությունների լայն տարածումը: Քաղաքների միությունը չորս ախտահանող ջոկատ էր ուղարկել քաղաք[23]:

---

[19] ՀԱԱ, ֆ. 1168, ց. 1, գ. 324, թ. 85:

[20] 1915 թ. հուլիսի 10-ին «Всероссийский союз городов» («Համառուսաստանյան քաղաքների միություն») և «Земский союз» («Всероссийский земский союз») կազմակերպությունները միավորվել են «Զեմստվային և քաղաքային միությունների միացյալ կոմիտեի» մեջ, կոչվելով «Объединённый комитет Земского и Союза городов» («Զեմգօր»՝ «Զեմստվային և քաղաքային միությունների միացյալ կոմիտե»): Միացյալ կազմակերպության նպատակն էր օգնել բանակին՝ մատակարարելով պարեն և անհրաժեշտ պարագաներ:

[21] ՀԱԱ, ֆ. 1168, ց. 1, գ. 324, թ. 86–87:

[22] Նույն տեղում, գ. 318, թ. 253–254:

[23] **Бурышкин П.,** նշվ. հոդվ., էջ 4:

Հետազոտություններից հետևում էր նաև, որ կար վառելափայտի սուր պակաս: Էրզրումում իր գործունեությունն է ծավալում Բաքվի մահմեդական բարեգործական ընկերությունը, որի ներկայացուցիչները իրականացնում են մահմեդականների մարդահամար՝ հետագայում օգնություն հասցնելու համար[24]: Վերջինիս ներկայացուցիչներն անընդհատ ահազանգում էին քաղաքի և շրջանի մահմեդական բնակչության «ծանր» դրության մասին, սակայն իրականում պատկերն այլ էր: Տեղի թուրք բնակչությունը հայկական գյուղերից բացահայտ տեղափոխում էր վառելափայտ, աթար, պատուհաններ և այլն[25]: Կազմակերպվել էր քաղաքապետարան, որտեղ չկար հայ ներկայացուցիչ[26]:

Էրզրումի ռուսական զինվորական իշխանությունները արգելել էին տեղացի հայերին խանութներ բացել և առևտրով զբաղվել: Նրանց «խորհուրդ էր տրվել» խանութը բացել տեղացի թուրքերից մեկի անունով, իսկ իրենք կարող էին այնտեղ աշխատել որպես վաճառող[27]: Խանութներ ունեին թուրքերը և ռուսահպատակ հայերը[28]:

Օսմանյան իշխանությունները չէին վնասել Կարինի Ս. Աստվածածին մայր եկեղեցին, քանի որ այնտեղ էին կենտրոնացրել հայերից բռնագրաված գույքը: Չէր վնասվել նաև նշանավոր Սանասարյան վարժարանի շենքը, ուստի, որպես ԿՀԲ-ն ՀԿԿ-ի լիազոր, Ռոստոմը գործուն քայլեր է ձեռնարկում, որպեսզի իրեն վստահվի վարժարանի տնօրինությունը[29]: Միաժամանակ, անհրա-

---

[24] ՀԱԱ, ֆ. 1168, ց. 1, գ. 324, թ. 102:

[25] «Հորիզոն», Թիֆլիս, 30 մարտի 1916, N 71:

[26] Նման պայմաններում հայ հասարակությանը տեղեկացվում է, որ Ղևոնդ Հակոբյանը իր միջոցներով վերանորոգել է Փառաքա գյուղի «թիւրքաց մզկիթը», տե՛ս «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, 5 յունիսի, N 23, էջ 719:

[27] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 39 շրջ.:

[28] «Աշխատանք», Երևան, 7 մայիսի 1916, N 2:

[29] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 40 շրջ.:

ժեշտ էր շտապ լուծել եկեղեցում պահվող մի քանի միլիոն ռուբլու արժեք ունեցող գույքի խնդիրը: Առաջինն այդ մասին բարձրաձայնել էր գնդապետ Մ. Սիլիկովը՝ Ալ. Խատիսյանին ուղղված հեռագրում[30]: Այս կապակցությամբ Ս. Հարությունյանը դիմում է կաթողիկոսին՝ խնդրելով աջակցել գույքի պատկանելության հարցը լուծելուն[31]: Գույքի հետ կապված հիմնահարցը Պետական դումայում բարձրացնում է նաև պատգամավոր Մ. Պապաջանյանը (Պապաջանով)[32]:

Ի վերջո, աստիճանաբար հաջողվում է հաղթահարել զանազան բարդությունները և սկսել ողջ մնացած հայերին բաժանել Ս. Աստվածածնում գտնվող գույքը[33]: Միաժամանակ իրականացվում են որոնողական աշխատանքներ՝ մահմեդականների տներում բռնի պահվող հայերին հայտնաբերելու և տարհանելու համար: Հայտնաբերվում են զգալի թվով որբ հայ երեխաներ, որոնց տեղափոխում են Ալաշկերտ[34]: Պետական դումայում ունեցած ելույթում Մ. Պապաջանյանն անդրադառնում է այս հիմնահարցին: Նա նշում է, որ ռուսական զորքերի կողմից գրավված շրջաններում իշխանություններին են դիմում քրդերի և թուրքերի մոտ բռնի պահվող հայերը, հիմնականում կանայք ու երեխաներ, սակայն ապարդյուն[35]:

Կարինում Քաղաքների միության կողմից բացվում է սննդակայան, որից կարող էին օգտվել 1200 հոգի: Կարինի հայ փախստականների կոմիտեն հիմնում է որբանոց՝ 100 որբի համար: Գործում էր վերապատվելի Հարոլդ Բաքստոնի անվան անգլիական որբանոցը[36]: Հ. Բաքստոնը ներկայացնում էր Լոնդոնի քաղաքապետա-

---

[30] Նույն տեղում, ֆ, 45, ց. 1, գ. 9, թ. 12:
[31] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1296, թ. 7:
[32] «Համբաւաբեր», 3 ապրիլի 1916, էջ 460:
[33] «Հորիզոն», 30 մարտի 1916, N 71:
[34] «Գաղափար», Թիֆլիս, 27 մայիսի 1916, N 41:
[35] «Համբաւաբեր», 3 ապրիլի 1916, N 15, էջ 459:
[36] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 19:

ռանը և իր ուղեկիցների հետ 6 շաբաթ շրջել էր Արևմտյան Հայաստանում, եղել Էրզրումում[37]: Նա գումար էր տրամադրել Էրզրումում որբանոց հիմնելու համար: 1916 թ. մայիսի 20-ին Էրզրումում բացվում է քաղաքային հիվանդանոց՝ 100 մահճակալով[38]: Ինքնին հասկանալի է, որ դա լուրջ երևույթ էր, հաշվի առնելով անմխիթար սանիտարական վիճակը: Բուժական հասատությունից հիմանականում օգտվելու էին մահմեդականները, քանի որ քաղաքում գրեթե հայ չէր մնացել: Այնուամենայնիվ, Քաղաքների միությունը Էրզրումում գտնվող և իր կողմից հիմնված հիվանդանոցի համար գործուղում է բժշկուհի Վ. Բուդաղյանին[39]: Պարզ է, որ տարափոխիկ հիվանդությունների տարածումը կարող էր սպառնալ գործող բանակին, ուստի, պայքարը նման հիվանդությունների դեմ դառնում էր առաջնային և հավանություն էր գտնում հրամանատարության կողմից:

Սեպտեմբերի դրությամբ, Կարինի հայ փախստականների կոմիտեի տվյալներով, քաղաքում կային էրզրումցի և այլ վայրերից եկած 1304, իսկ շրջակա գյուղերում՝ 1552 տարբեր տարիքի և սեռի հայեր[40]: Քաղաք այցելած Արշակ Սաֆրաստյանը արձանագրում է, որ Էրզրումը, շնորհիվ տարբեր տեղերից վերադարձող հայերի, աստիճանաբար կյանքի է կոչվում: Գյուղերում որոշ չափով սկսվել են գյուղատնտեսական աշխատանքները[41]:

1916 թ. սեպտեմբերի 24-ին ԿՀԲԸ-ն նախագահ Ս. Հարությունյանը պաշտոնապես դիմում է Կովկասյան ռազմաճակատում փախստականների կեցությունը ապահովող գլխավոր լիազոր, գեներալ-մայոր Վ. Մ. Թամամշևին՝ խնդրելով թույլատրել Էրզրումում

---

[37] «Հորիզոն», 23 յունիսի 1916, N 138:
[38] Նույն տեղում, 5 յունիսի 1916, N 124:
[39] «Հորիզոն», 14 յունիսի 1916, N 132:
[40] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 32:
[41] «Համբաւաբեր», 1916, 3 յուլիսի, N 27, էջ 838:

գնել 400 փութ բուրդ, որպեսզի ընկերության լիազոր Ռոստոմը կանանցից կազմակերպի արհեստանոց: Միաժամանակ, ընկերության նախագահը խնդրում է թույլատրել Էրզրում և Երզնկա ուղարկել ձմեռային իրեր, որի համար խնդրում է հատկացնել մեկ ապրանքատար վագոն[42]: Արհեստանոցը, Էրզրումի ռուսական համբարակային ծառայության առաջարկով, պետք է զինծառայողների համար կարեր սպիտակեղեն, գուլպաներ և ձեռնոցներ: Առաջարկը հավանություն էր գտել Կարինի հայ փախստականների կոմիտեի կողմից, որը որոշել էր վճարը վերցնել ոչ թե դրամով, այլ հումքով՝ բրդով, որը հնարավորություն կտար շարունակելու արհեստանոցի գործունեությունը[43]:

Վրաստանի և Իմերեթի հայոց թեմական առաջնորդ, եպիսկոպոս Մեսրոպ Տեր-Մովսիսյանին ուղղված հեռագրում Ռոստոմը հայտնում է. «..Ուղարկեցինք 300 փախստականներ, կան 200, գալիս են նորերը: Խնդրում ենք հեռագրով փոխադրել Քաղաքների Միութեան միջոցով 2000 ռ.»[44]: Ռոստոմը կարողանում է որոնողական աշխատանքների շնորհիվ գտնել ևս 131 հայ որբերի և տեղափոխել Ալաշկերտ: Իր հեռագրում նա հայտնում է, որ Խնուսում կա 50 որբ ու, բացի այդ, սպասվում են ևս 150 երեխաներ[45]:

Ռոստոմը, որպես ԿՀԲԸ-ն լիազոր, չի բավարարվում միայն Կարինով և շրջակայքով: Նա գնում է Երզնկա, որտեղ կար շուրջ 3 հազար փախստական, որոնց մեծամասնությունը ապաստանել էր Դերսիմի քրդերի մոտ, որոնք իրենց հնարավորությունների սահմաններում հոգացել են հայերի կարիքները[46]: Ըստ որոշ տեղեկութ-

[42] ՀԱԱ, 1168, ց. 1, գ. 324, թ. 54:
[43] Նույն տեղում, ֆ. 503, ց. 1, գ. 61, թ. 6–7 շրջ.:
[44] «Հորիզոն», 7 օգոստոսի 1916, N 175:
[45] «Գաղափար», Թիֆլիս, 27 մայիսի 1916, N 41:
[46] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 32:

յունների, Դերսիմում ապաստանած հայերի թիվը հասնում էր 6 հազարի[47]:

Սեպտեմբերի 26-ին Կարինի հայ փախստականների կոմիտեի ատենապետ Գ. Պոզեյանը ՀԿԿ-ին ուղարկած զեկուցագրում տեղեկացնում է Կարինի հայ փախստականների ծանր վիճակի մասին: Տարբեր վայրերից քաղաք եկող հայերը զրկված են գոյության նվազագույն միջոցներից: Հայերի տներում շարունակում են բնակվել թուրքեր, որոնք չեն ցանկանում բնակարանները հանձնել տերերին, պատճառաբանելով, որ դրանք իրենց են պատկանում[48]: Տեղի իշխանությունները որոշում էին ընդունել վերադարձնել հայերին պատկանող տները, որոնք անօրինական կերպով տիրապետել են թուրքերը: Ինչպես հայտնում է ատենապետը, որոշումը մի քանի օր անցած բեկանվեց[49]:

Հատկապես բուռն գործունեություն է ծավալում Հ. Զավրիյանը: 1916 թ. օգոստոսի 9-ին մշակում է հրահանգ հայ գյուղացիների համար, որտեղ նշվում է, թե նրանք ինչ իրավունքներ և պարտականություններ ունեն: Դա արվում է, որպեսզի գյուղացիները խնդիրներ չունենան տեղական ռուսական իշխանությունների հետ: Այսպես, գյուղացիները զգուշացվում են, որ հացահատիկ կարող են քաղել այն արտերից, որ կթույլատրվի իշխանությունների կողմից: Քաղվածի կեսը պարտավոր են հանձնել պետական պահեստ: Հնարավորության դեպքում, յուրաքանչյուր 15 հոգու տրվելու է մեկ զույգ եզ[50]: Սկզբնական շրջանում գյուղատնտեսական և վերականգնողական աշխատանքները միշտ չէ, որ ողջունվում էին իշխանությունների կողից: Այնուամենայնիվ, Հ. Զավրիևին հաջողվում է համաձայնության գալ Էրզրումի շրջանի պետ Մաքսիմովի հետ,

---

[47] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 14, թ. 19:
[48] «Հորիզոն», 19 մայիսի 1916, N 110:
[49] Համբաւաբեր», 9 հոկտեմբերի 1916, N 41, էջ 1290:
[50] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 77, թ. 6–8 շրջ.:

որպեսզի թույլատրեն փախստականներին բնակվել լքյալ գյուղերում, վարել, ցանել և հնձել դաշտերը: Մաքսիմովը խոստանում է տրամադրել նպաստ, եթե գյուղացիները հանձնեն հավաքված բերքի կեսը: Նման զիջման հիմնական պատճառն այն էր, որ Կովկասյան բանակի հրամանատարությունն արդեն հասկացել էր, որ Էրզրումի մահմեդականների նկատմամբ իրականացվող մեղմ քաղաքականությունը արդյունավետ չէ[51]: Հավանաբար, նման փոփոխության պատճառը Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ն. Ն. Յուդենիչի հրամանն էր, որի դաշտային շտաբը գտնվում էր Էրզրումում: Նա թույլատրել էր փախստականներին զբաղեցնել լքյալ գյուղերը, հնձել ցորենը և հերկել հողը[52]:

Ամռանը Էրզրում այցելած Ա. Սաֆրաստյանը արձանագրում է գյուղատնտեսական աշխատանքների աշխուժացումը[53]: Դա վկայում է հայկական կազմակերպությունների, մասնավորապես, ԿՀԲԸ աստիճանաբար թափ առնող արդյունավետ գործունության մասին: 1916 թ. հոկտեմբերի 26-ին համանման տեղեկություն է հաղորդում Տ. քահանա Տեր-Վարդանյանը Խ. եպիսկոպոս Մուրադբեկյանին: Քահանան տեղեկացնում է, որ Էրզրումի շրջանի 26 գյուղեր բնակեցված են հայերով, իսկ բուն քաղաքում գտնվում են 1200 հայ փախստական[54]:

Հ. Զավրիյանն առաջնահերթ էր համարում գյուղատնտեսական աշխատանքները ժամանակին սկսելը, ուստի, 1917 թ. հունվարին դիմում է Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ն. Ն. Յուդենիչին, խնդրելով աջակցել: Վերջինս իր հերթին համապատասխան դիմում է կատարում վերադասին, ընդգծելով, որ բնակ-

[51] Նույն տեղում, գ. 54, թ. 3 և շրջ.:
[52] Նույն տեղում, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 28:
[53] «Համբաւաբեր», 3 յուլիսի 1916, N 27, էջ 838:
[54] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 42:

չությանը աջակցելով լուծում են նաև բանակի պարենով ապահովման հիմնախնդիրը[55]:

1916 թ. սեպտեմբերի 22-ին ՀԿԿ-ն Էրզրում է ուղարկում Մկրտիչ Հարությունյանին, որը զբաղեցնելու էր Էրզրումի շրջանի պարենի պահեստի կառավարչի պաշտոնը: Նա փախստականներին բաշխելու էր ալյուր և ցորեն[56]:

1917 թ. փետրվարի 4-ից 5-ը Էրզրումում է լինում ռազմական գեներալ-նահանգապետի պարտականությունները կատարող Բ. Ս. Ռոմանկո-Ռոմանովսկին: Հանդիպումների և կայացած խորհրդակցության արդյուքում քննարկվում են առկա հիմնախնդիրները: Ինչպես երևում է խորհրդակցության արձանագրությունից՝ կառավարությունը որևէ գործնական քայլ չի նախատեսում, այլ խորհուրդ է տրվում Էրզրումի բնակչության օգնության համար կազմակերպել հանգանակություններ: Նշվում է, որ կառավարությունը փախստականների և Էրզրումի բնակչության համար տրամադրել է 500 հազար ռուբլի[57]:

1917 թ. փետրվարի 16-ին Բ. Ս. Ռոմանկո-Ռոմանովսկու մոտ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ, ի թիվս այլոց, մասնակցում էր Էրզրումի շրջանի գյուղատնտեսական աշխատանքների լիազոր Հ. Զավրիյանը: Քննարկվեցին փախստականների վերադարձի, գյուղատնտեսական գործիքների վարձու կայանների կազմակերպման և լծկան կենդանիների գնման հարցերը[58]:

Խորհրդակցության ժամանակ նշվեց, որ Երզնկայում և Դերջանում կուտակվել են շուրջ 5 հազար փախստականներ, որոնք գտնվում են ծայրահեղ ծանր պայմաններում՝ նրանց սով է սպառ-

---

[55] ՀԱԱ, 1168, ց. 1, գ. 324, թ. 40:
[56] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 539, թ. 4 և շրջ.:
[57] Նույն տեղում, 1168, ց. 1, գ. 324, թ. 50:
[58] Նույն տեղում, թ. 117:

նում: Հ. Զավրիևի[59] կատարած հաշվարկների համաձայն, անհրաժեշտ դրամական միջոցներ տրվելու դեպքում Սարիղամիշում հնարավոր է գնել մինչև 30 հազար փութ ցորեն[60], քանի որ տեղում սերմացու չկա:

Էրզրումի ոստիկանապետն առաջարկում է բարեգործական նպատակով որբանոց հիմնելու համար ամերիկյան հյուպատոսի տված 10 հազար ռուբլին հատկացնել հայ կամ մահմեդական բնակչության համար պարեն հայթայթելուն[61]: Գեներալը, սակայն, մերժում է, նշելով՝ այդ հարցը կարող է լուծվել միայն հյուպատոսի համաձայնությամբ:

Փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական իշխանությունները փոխում են իրենց վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ցուցում է տրվում որևէ արգելք չհարուցել նախկին ռուսական կայսրություն անցած արևմտահայ փախստականներին վերադառնալու իրենց բնակավայրերը, վերականգնելու իրենց շինությունները և նախապատրաստվելու գյուղատնտեսական աշխատանքներին: Ինչ վերաբերում է օսմանյան զորքերի հետ հեռացած թուրքերին, լազերին ու քրդերին, ապա ցուցում է տրվում արգելել նրանց վերադարձն իրենց բնակավայրերը[62]: 1917 թ. հունիսի դրությամբ Կարինի գավառում բնակվում էր 10500 հոգի, որոնցից 6250-ը՝ կանայք ու երեխաներ, 3800-ը՝ աշխատունակ տղամարդիկ[63]:

Հեղափոխությունից հետո ստեղծված անկայուն իրավիճակը հարկադրում է ՀԿԿ-ին որոշում ընդունել որբանոցը տեղափոխելու

---

[59] Հ. Զավրիևին փոխարինում է Ս. Տեր-Հակոպովը, տե՛ս ՀԱԱ, 1168, ց. 1, գ. 324, թ. 59:

[60] ՀԱԱ, 1168, ց. 1, գ. 324, թ. 52:

[61] Նույն տեղում, թ. 53:

[62] ՀԱԱ, 1168, ց. 1, գ. 318, թ. 1–2:

[63] ՀԱԱ, ֆ. 654, ց. 1, գ. 17, թ. 54:

Ախալցխա կամ Ցարսկիե Կոլոդցի[64]: Այդ նպատակի համար վաղորոք վարձում են բնակարաններ:

1917 թ. դեկտեմբերի 5-ին, Երզնկայում ռուս-թուրքական զինադադարի կնքումից հետո, զորամասերը սկսում են զանգվածաբար լքել ռազմաճակատը: Այդ ամենը բացասաբար է ազդում այն զինծառայողների վրա, որոնք շարունակում են մնալ դիրքերում և օրինակ են ծառայում նրանց համար՝ հետևելու մյուսներին: Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ի. Զ. Օդիշելիձեն հատուկ կոչով դիմում է զինվորներին ու սպաներին, զգուշացնելով, որ անկանոն և ինքնագլուխ կերպով մարտական տեղամասերը լքողներին հնարավոր չի լինի ապահովել սննդով և գիշերելու հնարավորություններով: Նա տեղեկացնում է, որ Էրզրումում կազմվել է նահանջը ապահովող հանձնաժողով, որի կազմի մեջ են մտել 1-ին և 6-րդ բանակային կորպուսների համագումարների կողմից ընտրված բանակային կոմիտեն, բանակի շտաբը, Էրզրումի գործադիր կոմիտեն և այլ կազմակերպություններ[65]:

ДЕЯТЕЛЬНОСТЬ КАВКАЗСКОГО АРМЯНСКОГО БЛАГОТВОРИТЕЛЬНОГО ОБЩЕСТВА В ЭРЗРУМЕ (1916 Г.)

СААКЯН Р.

Резюме

Ключевые слова: Эрзрум, Геноцид, Кавказское Армянское благотворительное общество, Самсон Арутюнян, Акоп Завриян, Степан Зорян (Ростом), Аршак Сафрастян.

---

[64] «Համբաւաբեր», 14 մայիսի 1917, N 18, էջ 417:
[65] ՀԱԱ, 1168, ց. 1, գ. 318, թ. 176:

3 февраля 1916 г. российская армия одержала крупную победу над турецкими войсками. Кавказская армия захватила город Эрзурум (Карин). Большая часть армянского населения города была уничтожена в результате геноцида. Председатель Армянского благотворительного общества Кавказа (КАБО) Самсон Арутюнян обратился к российским властям с просьбой разрешить Центральному комитету Армении (ЦКА), действующему под руководством КАБО, помочь выжившим после Геноцида армян в Эрзуруме. ЦКА предлагает Ростому (Степан Зорян) возглавить вышеупомянутые работы в Эрзуруме. После продолжительных работ постепенно преодолеваются различные трудности. Организовываются продуктовые ларьки, кустарные мастерские, детские приюты, больницы. С разрешения русских властей выжившие армяне возвращаются в свои деревни и начинают сельскохозяйственные работы.

Одновременно устанавливаются связи с курдами Дерсима, которые спасли около 6000 армян, в основном женщин и детей, чтобы их переселить в более безопасные места.

В 1917 г. ситуация резко изменилась после Февральской революции, особенно после подписания 5 декабря перемирия между Кавказской и турецкой армиями. Начался массовый исход военнослужащих Кавказской армии, вынудивший ЦКА прекратить свою деятельность в Эрзуруме.

THE ACTIVITY OF THE CAUCASIAN ARMENIAN CHARITABLE SOCIETY IN ERZURUM (IN 1916)

SAHAKYAN R.

Summary

Keywords: Erzurum, Genocide, Caucasian Armenian Charitable Society, Samson Harutyunyan, Hakob Zavriyan, Stepan Zoryan (Rostom), Arshak Safrastyan.

On 3 February 1916, the Russian army won a major victory over the Turkish troops. The Caucasian army captured the city of Erzurum (Karin). Most of the city's Armenian population was annihilated as a result of the genocide. The Chairman of the Armenian Charitable Society of the Caucasus, Samson Harutyunyan, asked the Russian authorities to allow the Central Committee of Armenia (CCA), acting under the leadership of the Armenian Charitable Society of the Caucasus, to help the survivors of the Armenian Genocide in Erzurum. The Central Committee proposed Rostom (Stepan Zoryan) to head the above-mentioned work in Erzurum. After a long period of work, various difficulties were gradually overcome. Grocery stalls, handicraft workshops, orphanages and hospitals were organized. With the permission of the Russian authorities, the surviving Armenians returned to their villages and began agricultural work.

At the same time, contacts were established with the Kurds of Dersim, who saved about 6,000 Armenians, mostly women and children, in order to resettle them to safer places.

In 1917, the situation changed dramatically after the February Revolution, especially after the signing of an armistice between the Caucasian and Turkish armies on 5 December. A mass exodus of military personnel from the Caucasian army began forcing the CB to cease its activities in Erzurum.